

Նորերում լեզվերով Պետերբուրգի հա-
րուստ հրատարակչներից միսի լոյս ընծա-
յած գրքերի ցուցակը, մեր աչքին ընկաւ
հետևեալը. «Разоренная семья—Сунд-
кянца», цѣна 1 рубль.

Հրատարակիչը թարգմանել է տուրք ու-
սերէն լեզուով հայ հեղինակի «Քանդած
օջախ» գրութեանը, ի հարկէ, առանց հե-
ղինակից թոյլտուութիւնը խնդրելու և առանց
նրան որ և է բան վճարելու և վաճառ-
ուում է իր հրատարակութիւնը 1 ռուբ-
լով, այն ինչ Ստեղծականացի ինքնուրոյն
գրութեանը հայերէն լեզուով ծախուում է
50 կոպէկով: Ահա հրատարակչների հա-
րստահարութեան մի պերճախօս օրինակ:
Նոյնպէս վարվում են մեր հրատարակիչ-
ները և Զօյայի և Գօդէի և Մօմէի և
Ֆօխտի գրութեանը հետո...

Որտեղ են մնացել ուրեմն, գրական սե-
փականութեան հակառակորդների ճոճաւն
Ֆրադնըրը մտքի սրբութեան մասին, նրա
ընդհանուր սեփականութիւն լինելու ան-
հրաժեշտութեան մասին...

Ընդհանուր, եթէ մի որ և է հրա-
տարակիչ ստիպված լինել թոյլտուութիւն
խնդրել զիցուք Ստեղծականացի կամուրջից
նրա գրութեանը թարգմանելու համար, եթէ
փող է վճարել հեղինակին, նրա գրութեանը
թարգմանելու իրաւունքը ձեռք բերելու հա-
մար, հեղինակը անշուշտ պայման կը դնէր,
որ թարգմանութիւնը աւելի թանկ չը ծախ-
վէր, քան ինքնուրոյն գրութեանը: Հետեւեալը
միայն այն կը լինէր, որ հրատարակիչը
չէր կարող հարստահարել ընթերցողներին
և ինքն, փոխանակ 50% կամ աւելի
վաստակելու իր հրատարակութիւնից, — կը
վաստակէր զուցէ միմիայն 15 կամ 20
տոկոս:

Եւ դա աւելի լաւ ու աւելի արդար կը
լինէր:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱՌԱՐԱԿՈՒՄ ԹԱՂԱՅԻՆ

Ապրիլի 22-ին, որ մեռելոց, առաւօտեան 9
ժամին էջմիածնի տաճարի դռները սկսեցին
հարկել: Սկսեալ էին յուղարկութեան պա-
տարագն և հանդէսը: Արարողագրու սրբազան
հօր *) շնորհիւ ևս այնպէս տեղ բռնեցի տա-
ճարում, որ կարողանամ աչքով ընդգրկել բո-
լոր հանդէսը:

Կաթողիկոսի դագաղը, բարձր պատուանդանի
վրա, դնալով ժողովրդի դասի միջավայրում,
իշխան խորանի դէմուղէմ երեսը բաց է. Հայ-
րապետի կողմից վրա դրված է Աւետարանը:
Ժամը դեռ է սկսած. ժողովուրդը հետզհետէ
գալիս է և համբուրելով աւետարանն և կաթո-
ղիկոսական աշի մատանին յետ է դառնում. ու
տեղաւորվում:

*) Տեղակալ կաթողիկոսի և առաջ լուստարը
երեմիա եպիսկոպոս Գալստեան:

անվերաբեկելի է, մասնաւոր որ ինչն օսմանս
դեսպանատունն ընդունում է, որ վճարելի մէջ
բերած պատճառները օրինաւոր են, նոյնպէս
դիտել տուաւ օսմանս դեսպանատան, որ պէտք
է ստիպել հին կառակաւորներին յանձնելու
իրանց մօտ դանակը գողը: Բայց օսմանս
դեսպանը պնդեց, որ պէտք է գործը պաշտօնա-
կան կերպով վերջնապէս և եպիսկոպոսը, իբրեւ
պետ հայ ժողովրդի, պէտք է դիմէ վեհափառ
Շահի կառավարութեան: Այդպէս և մտադիր էր
անել եպիսկոպոսը և անշուշտ դատը պիտի շա-
հէր, բայց ինչ ինչ ազդային նկատումներ և ա-
պագայ ծագելի չարիքն ի նկատի ունենալով,
բարեւոյ դատվեց առ այժմ յետաձգել այդ դի-
մումը:

Մենք միայն մի երկու խօսք կասեցնեց այն ան-
ձանց, որոնք առիթ են տալիս չնչին խնդիրների
և անձնական հաշիւների պատճառով, ազդային
մեծ իրաւունքներ և շահեր վտանգի տակ դնել.
պարոններ, ամեն մի ազնիւ հասարակական գոր-
ծիչ, եթէ խղճմտանք և հոգի ունի, պարտաւոր է
միշտ իր գործունէութեան հաշիւը տալ. եպիսկո-
պոսը պարանշեց հաշիւ, պէտք էր անմիջապէս
տալ և ոչ թէ պատկաւատ խօսքերով, սօ փ և ս-
տ ու թ եւ մ ր խոյ տալ:

Այդ անխնայ անձնական հաշիւները և անա-
նիւր լեռքը ամեն բան տալիս ու վրա են անում:

Արարողագրու կարգադրութեամբ ծաղիկայ
արուեստակիրտ պատկերով շուրջնակի դարձ-
րում են դագաղը: Տասներկու պատանեակներ,
12 սե թաւեայ բարձիւկների վրա 12 շքանշան-
ներով, դագաղի երկու կողմից կանգնում են և
այդ երկու կարգի ծաղիկը վերէ կողմից միա-
նում են իրար հետ կամար կաղնելով: Սրանցից
յետոյ, այս ու այն կողմից, երկրորդ կարգը կաղ-
նում են պատգամաւորները, սեով կապած իս-
տակ մօմեր ձեռքերին:

Ինն և քսուորքն է: Ժամն օրհնում է ալեկարդ
Յովնանէս եպիսկոպոս Տաթևացին: Գալիս ըսկը-
սում է խորին եղանակաւորութեամբ. «Յորհուրդ
խորին»: Երբեք վերին բնով ազուտ լոյսը և խորհր-
դաւոր ամայութիւնը աջակցում են տեսլա եղա-
նակիւր երգի վսեմութիւնը բարձրացնելու: Գրա-
րի ձայնը բարձր կամարներէ մէջ մտնելով, էլ աւե-
լի մեղմանում է:

Ժամարար քահանայ Սարգիս եպիսկոպոսն է:
Յայտարարեց առաջ իշխան խորանի առջև դա-
լիս են կանգնում երկու խաչ, չորս խաչվառ և
երկու կերտն-ձայն: Կատարում են թափօրը. վերին
բնով առաջ խորանից, պատարագիչը իշխած է մի-
ջին բնով իշխան տեղը, ուր և շարունակվում է
պատարագը: Գալիսները շրջապատում են դա-
գաղը: Չորս եպիսկոպոս, զգեստաւոր և եպիսկո-
պոսական թագ ի գլուխ, գալիս են կանգնում
դագաղի զլինի կողմից: Սրանք են՝ Երեմիայի թե-
մակալը Գառնակեան, Սինդի անդամներ Սու-
քիա Պարոն և Արիստակէս Գառնիկ և նախ-
կին թեմակալը Արստասէս և խմբիւթի հայոց
վիճակի՝ Արիստակէս Սեդրակեան: Ապա մի
վարդապետ բերում է կաթողիկոսական դաւա-
ղանք բողաւոր և կանգնում է դագաղի այս զը-
խից, նոյնպէս և ուրիշ երկու վարդապետներ և
պիսկոպոսական դաւաղաններով իշխան խորանի
առաջ երկու կողմից կանգնում են երեսները դէ-
պի ժողովուրդը: Այնուհետև Հաւատաւորի ժա-
մանակ գալիս են չորս քահանայ, զգեստաւոր-
ված, և աւել են բռնում եպիսկոպոսների կողքին:

Հանդէսը իր լիութի շքեղութեան մէջ է. ար-
դարեւ փառանքը Հայաստանեայց Մայր Տաճարը,
որին թաղաւոր Տրդատ, թաղուհին Սէլմէն տիկին
և թաղաւորներն խորհրդակցելու հիմը են դրել,
և որ օծել է այդ հիմքն իր արիւնքաւորներով մեծ
Պարթև լուսաւորիչ Գրիգոր և որ պաշտել է հա-
ղար ու հինգ հարիւր տարի հայ ժողովուրդը, այդ
Մայր Տաճարը դիտել խօսել իր աւագանի որդիների
սրտի հետ, մտքի հետ, երեսակայութեան հետ:

Չանցելով նոր եղանակով հնչում են վեհափառ
աղբերակ. խաչերն ու խաչվառները իրանց բո-
լոր սարքովն անցնում են վերին բնով և կանգ-
նում էն երեսները դէպի ժողովուրդը: Վերաբեր-
ման ժամն է, դպիրների երգում են սրբասացու-
թիւնը վսեմ եղանակով. զանգերի հնչիւնը տա-
ճարի բարձր կամարներից իջնում միախառն-
վում է հրաշալի ներդաշնակութեամբ դպիրների
նուազի հետ: Զմայրուհիներ անձաւելի է, զգա-
մունքները զեղրում են սրտի մէջ, մի զիւթական
հոսանք կարծես այդ բոլորէն անցնում էր ժողո-
վրդի գլխի վրայով, սրտի յուղմունքն արտա-

Նրեք տարի առաջ Բառալիկայի հայերը 1,000
զիւրդը դրամ ուղարկում են թէհրան պոլսեցի Մ.
Մ.-ին, խնդրելով որ այդ գումարով մի մասնը
բերել տայ Սուրբ, կամ Եւրօպայի և ընծայէ
թէհրանի հայ աղքատ, յանուն Զաւակի հայ ժողով-
րի համար: Կը նշանակէ, որ Զաւակեցի կամեցել են, որ
թէհրանի հայերն ունենան մի ազգային տպարան:
Բայց արի տես, այդպէս չեն մտածում այն անձինք,
որոնք իրանց միջնադարի են համարում աղքատի
գործերի ղեկավարութիւնը: Ըստ որում այդ տը-
պարանը ուղարկված էր աղքատի ուսումնարանի
նախկին վարչութեան անունով, որը միշտ նկատ-
վել է և աղքատի վարչութիւն, դրանից այն եղ-
րակացութիւնն արին բարոյականութեան վրա
խիստ առաձգական դադարեալ ունեցող մի քանի
անձինք, թէ այդ տպարանը այդ վարչութեան
անդամների սեփականութիւնն է, ուստի երբ ու-
սումնարանի հին վարչութիւնը հրաժարական
տուաւ, նա իր հետ տարաւ և աղքատի տպարա-
նը, և մի կերպով իր արարքը սքողելու համար,
յայտնեց, որ Բառալիկայի հայերի ուղարկած գու-
մարը չէ բաւականացել ուստի իրանք ստիպված
են եղել աւելորդ փող ծախելու, և դրա համար
տպարանը գրաւել են: Առաջնորդն ու նոր հո-
գաբարձութիւնը յայտնեցին, որ թող ներկայաց-
նեն օրինաւոր հաշիւ, աղքատ տպարանն է վճա-
րելու աւելորդ ծախսը, բայց նրանք խուսափե-

յայտնում է աչքերի մէջ ոգևորութեան արտասու-
քով: Մարմինն այդ միջոցին զգացումներով բոր-
բոքված մի զանգուած է, մոխրական մորենու-
նման այրվող բայց անկէջ:

Սուրբ խորհուրդը խնկարկութեամբ և ահեղ
չքով վերին տաճարից բերում են միջինը և հան-
գատացնում են իշխան տեղանի վրա: Խաչ ու
խաչվառ դառնում են իրանց առաջին տեղը:

Վերաբերումից յետոյ եպիսկոպոսներն ու քա-
հանաները տեղափոխվում են: Եպիսկոպոսներն
անցնում են բնով, քահանաները բարձրանում են
դագաղի պատուանդանի աստիճանների վրա. ա-
պա դագաղը վերցնելով Թեղից մատուցանում են
իշխան խորանի առաջ և դնում են բարձր, երե-
սը դէպի ժողովուրդը: Այդ միջոցին վարդապե-
տները զգեստաւորված գալիս են և շրջապատում
են դագաղը եպիսկոպոսների հետ: Գալիսների
երգը դագաղում է: Այս անգամ երգում են ի-
րանք վարդապետները վեղարուր: Պատարատ-
վում են օծել կաթողիկոսի մարմինը:

Որպէս մի յանկարծական հեղեղ, կոխելով
դաշտը, ամբարն այս միջոցին ողողում է միջին
դասը: Այլ և կանաչը Նախալիկայի և Կարապե-
տի խորանների վերին աստիճաններից սկսած
պատանում կանգնում են և լցվելով լցվելով հա-
նում և սղմում են մի օղակի մէջ պաշտօնարար-
ներին:

Պատարագիչ եպիսկոպոսը սկսում է կարդալ
աղօթքը: Օծման սկզբին գալիս են և տեղաւոր-
վում են միջին բնով Երեմիայի նահանգապետը
գինեբալ Յերեմ, զլինաւոր կառավարչի ներկայա-
ցուցիչը Մկրտաւորանով և այլ քանի մի քաղաքա-
յին և զինուորական պաշտօնականներ և պար-
սից Երեմիայի փոխ-հիւպատոսը: Տաճարը ծայրա-
հօծ լինէ է: Լիքն են և ներսից միջին կաթողի-
կէի շուրջ զանաւոր պատիւգումը, առաջ խորանի
տեղից բարձր պատուանդան և առաջ դրան վրա
պատի գլխի պատուհան:

Սրբազան Արիստակէս եպիսկոպոս Գառնիկ
բարձրանում է իշխան տեղի աստիճանի վրա,
դամբանական ճառն ասելու: «Սրբաւոր անդա-
ման» է հաշկում տեղ. «Նոյնիս աստիճան, պատիւ,
փառք, հանձար չը կարողացան ազատել զինքը
մահուան ձեռքերից»: «Հաւատով ասրեցաւ, հաւա-
տով մեռաւ», ասում է նա և այս կէտի վրա
չնշտում է և ընդարձակվում: «Մահ հայելի է, որ
բոլոր փառքերի տպաւորութիւնը պատկերացնում
է իր մէջ»: Սակայն այս կէտը սրբազան ասե-
նաբանը չէ հանդիսանում կատարված գործերի
թուարկութեամբ: «Շահեցրէք տաղանդը, որովհե-
տե Տիրոջ դալուստը մեծ է»: «Աղքատի հոգեւ-
մնայուն»: Ուստի և նա կարող էր ասել Առաքեա-
լի հետ. — Այսուհետև նուիրեալ եմ, և ժամանակ
դարձի իմը հասել կայ: զբարեւը պատերազմ
պատերազմեցայ, զընթացան կատարեցի, գնա-
ւատան պահեցի: Այսուհետև կայ միայ ինձ ար-
դարութեան պատկեր: — Այս վկայութեան վրա ա-
տենաբանը կնքում է իր դամբանականը երջան-
կութիւն հոգեւ և հանդիսալ յաւիտեական մաղ-
թելով նրա համար:

Երբ հաշիւ ներկայացնելուց: Եպիսկոպոսին ուրիշ
բան չէր մնում անելու, եթէ ոչ յայտնելու Բա-
ռալիկայի հայերին երկրորդին: Այնպէս մի քանի
ամիսներ: Անկարգ գործը միշտ վատ հետևանք է
ունենում. պարսից կառավարութիւնը իմանալով
տպարանի ցրված յայտարարութիւններից, որ
թէհրանում բացվել է մի տպարան, առանց որ և
է իշխանութեան կողմից թոյլտուութիւն ունենա-
լու, հրամայում է փակել և տպարանը փակվում
է: Հասկանալի է, որ եթէ տպարանը աղքատի
լինէր, կամ յանձնվէր ուսումնարանին, այն ժա-
մանակ նա կախում ունենալով առաջնորդից, ո-
րի իշխանութիւնը ճանաչում է պարսից կառա-
վարութիւնը, չէր կարող այդ վտանգին ենթարկ-
վել:

Հայերից անցնելը պարսիկներին... Հայերի
տպարանից անցնելը պարսկական թատրոնին:
ձիւղն ասած, ևս երբեք չէի սպասի, որ պարսիկ
երկրաստորութիւնը ընդունակ է այդպէս շուտ
ըմբռնելու համամարդկային զաղափարներ: Ու
մտքից կանցնէր միայն 10 տարի առաջ, որ
Պարսկաստանում կարելի է թատրոն ներկայա-
ցնել, բնով վրա կին կարող է դուրս գալ, բնով
կարելի է ծաղիկ պարսկական սովորութիւնն
ըր, քաղաքի երկրպագան լուսաւորութեան օգու-
տը: Բայց անկարելին այժմ կարելի է դարձել:

Վկում են օծում երգերով ու աղօթքներով:
Պատարագիչ սրբաւոր օծում է հանգուցեալի
նախ ճակատը և ապա աջը և աւսում է պահպա-
նիչը: Այնուհետև քահանաները բառաւորով դագա-
ղը մեծապէս թափարով երեք անգամ պտոյտ են
անում իշխում խորանի շուրջը: Երանակում են ող-
ջոյնը, ողջոյն հրաժեշտի, որ եկեղեցու հայրապե-
տը տալիս է իր հովուած բոլոր դասերին: Սրտայոյզ
հրաժեշտ: Ոգևորութիւն գործող մեծ արարողու-
թիւն: Շքեղացուցէ հանդէսը փողը ինչ էլ աւելի,
կուսեցէք այդտեղ աւելի մի մեծ աշխարհապա-
րազմութիւն, թող ներկայանան նախարարները
պալատից և հիւսիսի ու հարաւի գնդերը ի-
րանց հողամածան դրօշակներով և դրէք այդ
դագաղի մէջ Պարթև—Արտաշէս—Երկրորդ—
Մեծ, ինչ դարմանը, որ նրա գերեզմանի մէջ հո-
ստին կենդանի կենդանի թաղուելու համար հա-
յոց ոգեթափաւ սրտերը, և Արտաւազը հրաշա-
ցած, միանգամայն և կասկածելով որ ինքն հօյր
այդքան մեծութեանը չը կարողանայ հասնել,
զգացումներով բորբոքում ասէ՛: Մինչ դու գնա-
ցիր, և զերկիրն ամենայն ընդ քեզ տարաւ, ևս
աւերակացս իրաւ թագաւորն *):

Այս հանդէսից յետոյ դագաղը վերադարձնում
են իր առաջին տեղը, ժողովրդի մէջ: Բոլոր շքա-
ղութիւնը առաջին կարգով դարձնալ բոլորվում
է դագաղի շուրջը. պատկերը շուրջանակի պա-
հում են բարձր: Տէրութեան պաշտօնականները
մատուցում են հայրապետի աջը համբուրելու:
Պատարագի Հայրմերկ պառլ. մի. քաղաքի կայ-
սր տարկաւոր եղանակով է և դպիրը պա-
տասնանում «Տէր ողորման» եղանակով: Երբեք
որ և է ժամանակ, որ և է տեղ, ևս այդ քաղաքը
այնպէս սիրտ թափանցող, զգացումները բարձ-
րացնող և լսելիքը դիպչեցնող եղանակով չէի
լսել: Մեր պապերի այդ նուիրական տաճարի
մէջ, հոյակաւոր կամարների տակ, այն շքեղապէս
արարողութեան հետ վսեմապէս ներդաշնակված
այդ եղանակը արդարեւ երկնային էր, կամ, մեր
ըմբռնումին աւելի մօտ բացատրութեամբ ասե-
լով, կախարդական էր: Հիացումն կրողը եղա-
նակութիւն. ևս իմ սրտի բուռն բերմունքով
արտայայտելի՝ մտքումս ասելով կեցցին դպիրը և
սարկաւազունը և ձեռքս կարծես մի ծածուկ
զօրութեան մղումով դրոշմեց յուշատաքին վրա
— կեցցին դպիրը և սարկաւազունը:

Պատարագի վերջին աւետարանը կարդում են
ժամի 11 1/2-ին: Հանդէսը նոր շարժումն է առ-
նում: Միջին դասում խաչերն ու խաչվառները
դպրիս են և տեղաւորվում դաւաղանակալ երկու
վարդապետների առաջ երկու կողքի վրա, երես-
ները դէպի ժողովուրդը: Ժամարար սրբազանը
հոգեւոր ասում է ժամի 11 և 40 րոպէին: Այնու-
հետև քահանաները նորից վերցնում են դագաղը
առաջին տեղից և հանդիստ են դնում իշխան
տեղի առաջ. սկսում են թափօրը դի-օրհնու-
թեան արարողութեամբ, իշխան տեղից անցնելով

*) Երբ դու գնացիր, բոլոր երկիրն էլ քեզ հետ
տարաւ, ևս աւերակներն իրա ինչպէս թագաւո-
րեմ:

այսպէս էի մտածում ևս մարտի 21-ին և ապրի-
լի 30-ին, երբ մտայ պարսկական արքայական
թատրոնը: Խաղում էին պարսիկներն լեզուով
«Կախարդված պարից» և «Երեք զինուոր» կամ:
դիաները, որոնց Ֆրանսիկներից թարգմանել է
պարսիկներն «Կայսերական» կոչված մազեթի
(ուսումնարան) տեսուչներից մինը: Հմարտի և
կանանց տեղ խաղում էին պատանիներ, կանաթ
զգեստով, բայց այդ ևս մի մեծ քաջ է և դեռ
չատ վաղ է այն օրը, երբ պարսիկ կինը համար
ձակվի բնմ դուրս դալ: Բոլոր խաղացողները
չատ լաւ կատարում էին իրանց դերերը. «նորու-
թիւնն այս էր, որ յուշարարը չը կար և ամենքը
խաղում էին առանց յուշարարի. դերերը շատ
լաւ սերտած էին. շարժմունքը, ձեւերը, հոգեբա-
նական վարկեանները խիստ գեղեցիկ պրոս-
յայտվում էին: Արքայական թատրոնը մի միջակ
մեծութեան, կուր, մեր Ռուսաստանի դաւառա-
կան լաւ թատրոնի ձեւ ունի, լոճանքով ըն-
դարձակ բնով, յարմար դեկորացիաներով և
զգեստներով: Ժողովուրդը յաճախում է այդ
թատրոնը, մանաւանդ որ երաժշտութիւն ևս կայ
այն է զինուորական դպրոցի մուգիկանտ աշա-
կերները անարականներում նուազում են:

Հ. Առաքելեանց

վերին տաճարը, այստեղից դառնալով Նախա-
վարի խորանի առաջ և ապա վերջին հանգիստը
գտնելով Բ. Կարապետի խորանի հանդէպը Ամպո-
նիստ սեւաքողոված շարժում են տեղից, գաւա-
րանաբար վարդապետները և խաչերն ու խաչ-
քաները անցնում են նրա առաջ, պատրաստ-
վում են տաճարից դուրս գնալու: Դին վերջին
անգամ վերադարձնում են առաջին տեղը՝ դիա-
բարձի վրա, և ապա նորից վերցնելով յուրա-
րուրդը դուրս է գալիս եկեղեցուց ժամի
12 և 1/2-ին:

Վանքի տանիքները պահված են խուռն բաղ-
նով: Մայր Տաճարի կտուրն ինքն էլ բլրան-
ված է և նրա տանիքների վրա անեկիւղ թառած
են թռչունների նման ամբողջ մարդիկ: Տաճարի
բակն էլ իր կարգին լի է բազմութեամբ:

Գարձեալ թափոր Տաճարի չորս կողմը, և
հասկ զին հանդիստ են դնում իր յաւիտեական
քնակաբանի կողմում: Սա, այս քնակաբանը, փո-
րված է Մայր Տաճարի դանդաղաբան ձախակողմի
առաջին սիւնի տակ: Աջակողմի սիւնի տակ
հանգչում է Գեորգ Զորորդը:

Երկու կախկոպտ մի մի ափ հող առած մաս-
շուտ են, պաշտօնաբար կախկոպտն օրհնում է
հողը և եպիսկոպոսներն ածում են նոյնը գերեզ-
մանը:

Երեսկապտարութիւնը մի րօպէ դադարում է,
տեղի տալով ճառասացութիւններին: Առաջինը
ճիմարանի Ստեփաննոս անուն սարկաւապինն է,
սա հիւսում է իր սուղը խորհնացու ողբի վրա:
Երկրորդը պ. Գեորգ Բարխուդարեանին է, որ
ստանալու հիւսուածքով կոծում է լուսոյ դռներ
բաց անող Հայրապետի մասը:

Այնուհետև վերակալում է ընդհատված արար-
ողութիւնը տաճարի բարձրից տխուր զօղանջող
դանդաղ աղբեցութեան տակ և կաթողիկոսի
մարմինը լինցնում են ի հող ժամի 1 1/2-ին:

Ա. Մ. Եղեկեան

ՆԱՄԱԿ ԲԱՐՈՒՄԻՑ

Մայիսի 14-ին

Այս օրերումս Բաթումից անցնելով Լճիկոն
գնաց Միդա Մեղրու-խանի եղբայրը, որը գա-
լիս էր Թէհրանից, և որտեղից նրան ստիպել է-
ին հեռանալ:

Բաղաբեց մի քանի վերստ հեռու գտնվում է
«ГОРОДОКЪ» անունով մի տեղ, ուր կան բաւա-
կան դեղեցիկ շինութիւններ, և ապրում են
նոյն իսկ քաղաքում ծառայութիւն ունեցող շատ
մարդիկ: Չորս կողմից այդ տեղը չբնակաւորված
է սիրուն անտառով: Բերլինի դաշնադրութեամբ
քանի որ Ռուսաստանն իրաւունք չուներ անմի-
ջապէս քաղաքի մէջ ամրութիւններ կառուցանել,
նա այդտեղ շինել էր նշանաւոր ամրութիւններ,
որպէս քաղաքից դուրս մի տեղ, սակայն երբ
Բերլինի դաշնադրութեան շատ կէտեր խախտու-
ցան, այն ժամանակ կառավարութիւնը անհրա-
ժեշտ դատեց վերջացնել Բաթումի պորտո-ֆրանս-
կոն, և նոյն իսկ քաղաքի մէջ ամրութիւններ
կառուցանել:

Բաթումը, որպէս դործարանական քաղաք, ուր
նաւթի և կեղտոտութեան մէջ տանեակ հազար
մարդիկ են բանում, չը նայելով նոյն իսկ բնա-
կիւնների թէ՛նք մի կանոնաւոր բաղնիք չունե-
կան երկուսը, որոնցից առաջինը չորս սենեակ
ունի միայն, և այն էլ ոչ ամենքի համար մաս-
շուտ: Միւսը մի փոքրիկ թրքական բաղնիք է, իր
կեղտոտութեամբ և անբարոյականութեամբ, սա-
կայն քանի որ ուրիշը չը կայ, նոյն իսկ այդպիսի
տեղի համար անսովոր գներ են պահանջում: Ինձ
ասեցին, որ այդ բաղնիքների տէրերը հազար-
ներ են վաստակում: Կասկած չը կայ, որ կաշ-
կաստեն. դարմանալի է թէ ինչու որ և է փոքա-
տէր մարդ չէ ձեռնարկում մի ընդարձակ և մա-
քուր բաղնիքի շինութեան, քանի որ պահանջը
մեծ է և աշխույժութիւնը անկասկած:

Այս տարիս փողոցների լուսավորելը վեր առ-
նող կապալաւուռն, շատ պակաս գնով վեր ա-
ռած լինելով կապալը, այժման էլ հող չէ տա-
նում փողոցները լուսավորելու: Ինձ շատ տար-
բնակ երեւց մի մեթոդ գիշեր ոչ մի վառ լապ-
տեր փողոցում չը տեսնելով: Ինձ ասեցին, որ
կապալաւուռն օրացոյցի հաշուով գիտէ եղել, որ
այդ գիշեր լուսինը պիտի դուրս գայ: Բայց լուս-
նի վրա յոյս, զնոյ պարոնին պիտի նկատենք, որ
շատ դիւրեւոր ամպամած են լինում, և մենա-
կը լինի եթէ պարոնը այդ էր նկատի ունե-
նար, որովհետեւ որքան էլ պարոն լուսինը ցան-

կանար ի պատիւ մեր պարոնի՝ քաղաքը լուսաւո-
րել, նրան ծախս չը պատճառելու համար, այնու
ամենայնիւ նա չէր կարող:

Լսելով է, որ Բաղուի սինդիկատը գնել է այս-
տեղ «Նէյման» ֆիրմայի գործարանը և ունեցած-
ները: Այդ ֆիրման մեծ քանակութեամբ այստե-
ղից ածովը շոգենաւորով նաւթ է արտահա-
նում:

Ա. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇՈՒՇՈՒՑ միջ գրում են: «Անցեալ օրը մեր օ-
րիորդաց դպրոցի վարչութիւնը, դպրոցի հաշուի,
աշակերտութիւնների համար աւազ վարժուհու այ-
գիւրում ինչոյք էր սարքել: Ինչոյքին ներկայ է-
լին և մի քանի աղաներ: Չը գիտենք ինչ կը
նշանակէ անէ տուն կոպէսներ հաւաքել դպրոցի
դպրութիւնը պահպանելու համար և յետոյ այդ
կոպէսներից մի դուստր վերցնել ու այդ դուստ-
րով ինչոյքներ սարքել աշակերտութիւնների հա-
մար»:

«Մշակի» № 53-ի մէջ տպված բանասիրա-
կանում, Պարսկաստանի վաճառականութեան մա-
սին, մի օրաւ է մտել լուսնաշնորհի մէջ: Նուշի
արտահանութիւնը Պարսկաստանից 1890 թ.ին
եղել է ոչ թէ 686,000 պուլը, այլ միայն 68,600
պուլը:

ԵՆԵՆՈՎԿԱՍ գիւղից մեջ գրում են, որ մայիսի
5-ին այդտեղ մի մաշականի երեխայ անդառնա-
լիս թունաւորվեց ֆոսֆորով: Նա խաղալով
լուցիկի արկղով, բերանը դրեց լուցիկները և կուլ
տուց լուցիկների գլուխները: Անմիջապէս երե-
ւացին թունաւորվելու նշանները: Ինչ միջոց էլ
փորձեցին կաթ, սոճա և այլն, — բայց չօգնեց և
երեխան մեծ չարչարանքներով վախճանվեց հե-
տեւաւ առաւօտը:

ԵՆԵՆՈՎԿԱՅԻ մեջ գրում են, որ այս տարի Սե-
ւանի ծովակի կողմերում անշուքի շատ անձրևներ
են դալել: Այդ անձրևները վնասում են արտե-
րին: Սակայն առ այժմ բոլոր կիսնական միջրը-
ներն առատ և էժան են ԵՆԵՆՈՎԿԱՅԻ: ցորենի
խաղիւրդ արժէ 21 բուրլի, դարին՝ 13 բուրլի,
լուլի լիւրը՝ 3 բուրլի: Ինչպէս ձուկն էլ այս տա-
րի շատ առատ է Սեւանի ծովակում և զինն էլ է-
ժան է:

Մի թիֆլիսցիական պարոն խնդրում է միջ տը-
պաղել հետեւալ նամակը. «Ինչպէս յայտնի է
ձեր լրագրի ընթերցողներին, հանգուցեալ Ստե-
փանոս Պալասանեանի նախկին աշակերտները,
երեք տարի որանից առաջ, իրանց միջից փող է-
լին ժողովել որպէս զի հրատարակեն հանգուցեա-
լի համառօտ կենսագրութիւնը, որը և դիտաւո-
րութիւն ունէին ծախել հանգուցեալի աշակերտ-
ների մինի օգտին: Այդ թշուառը թափառում է
Թիֆլիսի փողոցներում հիւանդ և աղքատ վե-
րոյնչաւ փողերն ահա երեք տարի է, որ նուի-
րատուները յանձնեցին իրանց միջից ընտրված
երեք ընկերներին, որպէս զի մտադրված հրատա-
րակութիւնը գլուխ բերելու Սակայն վերոյիշեալ
պարոնները մինչև այսօր ոչ գիշեր են հրատարա-
կում, ոչ էլ հաշիւ են տալիս հաւաքած փողերի
գործարանութեան մասին: Եթէ այս անգամն էլ
պարոններն անուշադիր կը թողնեն ներկայ գրու-
թիւնը, — այն ժամանակ ստիպված կը լինենք
հրատարակել պարոնների աղքատներին»:

Եւրօպայի ճանապարհորդութիւնից վերադառ-
նալով, այս օրերս հասել է Թիֆլիս պարսից Շա-
հի անձնական թարգման, հայազգի Գովհաննէս-
խան Մասսէյեանց: Նա այստեղից ուղևորվելու է
կրկին դէպի Թէհրան: Գովհաննէս-խանը շատ բա-
զմէ ևսրօպական լեզուները:

Մահ չորրորդ օրն է, որ դարմանալի համբե-
րութեամբ Արևալանների բանկի անդամները
լսում են ինքնուրոյն հետաքրքիր անվերջ ճառա-
բանութիւնները ֆինանսական պոլիտիկայի մա-
սին, բայց թէ մի բան հասկանում են այդ մուլթ
դատողութիւններից՝ աստանան գիտէ: Պարզ է
միայն ամենքի համար, որ երկու Մաշաբլիները
պատրուակ դարձնելով ֆինանսական պոլիտի-
տիկան, կամենում են նստեցնել իրենց զորքի
իշխ. ձախմարտներին: Բայց դիմանք ոչինչ չէ
զուրս գալիս իշխ. ձախմարտին շատ բարձր է
գրում:

Կանգնած հաւարակութեան աչքում, և Մաշաբե-
լիների անտակտ յարձակումները վրդովեցնում
են միայն ժողովի մեծամասնութիւնը, որը
այժմ սկսել է բաւական թշնամաբար վերաբեր-
վել նրանց անսովորին:

«Астраханск. Вѣстн.» լրագրում կարգում ենը,
որ երգչուհի օր. Նիկիտա այժմ կոնցերտներ է
տալիս Կազան քաղաքում: Կազանի լրագիրներն
էլ նոյն կարծիքն են յայտնում, ինչ որ մենք յայտ-
նեցինք օրիորդի ձայնի մասին, այն է որ Նիկի-
տայի ձայնը դեռ կատարելապէս մշակված չէ և
զուցէ ապագայում միայն այդ ձայնը իր կատա-
րեալ դարգացման կը հասնէ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՐԿՐՈՒ ԿՈՒՍԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Սօլբերի կուսակցութիւնը շարունակում է շո-
ղորթիւն անգլիական դեմոկրատիային և խոս-
տանալ նրան ամեն տեսակ բարեփոխ: Նա շա-
րունակում է խոստանալ և իրանդացիներին՝
վերջնականապէս դուրս բերել home rule անու-
անված ինքնավարութիւնը: Սակայն ոչ անգլիա-
կան դիպլոմատներ, ոչ էլ իրանդական աղագիրն
կուսակցութիւնը հաւատ չեն ընծայում պահպա-
նողական կուսակցութեան խոստանումներին:

Նոյնպէս խախտված է անգլիական ժողովրդի
մէջ և հաւատը դէպի աղատամիտ-հերձաւոր-
ները: Միայն դադարած են, բուն աղատամիտ
կուսակցութիւնը հետզհետեւ աւելի և աւելի վրա-
տանակում է զրաւում հասարակաց կարծիքի
մէջ: Նրան հաւատում է և ռաւմապետական
Անգլիան և ինքնավարութեանը ձգտող իրանդիկան:
Պարսկաստանի համար վերջին ամիսները կատար-
ված լրացուցիչ ընտրութիւնները ցոյց են տուել,
որ դադարած են կուսակցութիւնը հետզհետեւ ա-
ւելի և աւելի նշանակութիւն է ստանում իր հայ-
րենիքում: Եւ ինչ որպէս շարունակվի, պար-
սկական կուսակցութեան ընտրութիւնների քո-
պէին Գաղստոն անտարակոյս ձեռք բերած կը
լինի երկրի մէջ: Մի ահալին մեծամասնութիւն,
որի օգնութեամբ կը կարողանայ թէ իր մտադը-
ված ներքին սոցիալական ռեֆորմները գլուխ բե-
րել և թէ իրագործել իրանդական ինքնավարու-
թիւնը:

Այս րօպէիս պահպանողականները սերմա-
նում են խոստանումները, իսկ դադարած են աղա-
տամիտներ հնձում են ձայնը և հանգիւր-
թիւն: Ինչքան էլ խոստանում է անում մարկիզ
Սօլբերի, արմատականներն ու բանաւորները խո-
ն են մնում նրա արած խոստանումներին և չեն հա-
ւատում նրա խոստացած հասարակական վերա-
նորոգութիւնների աջողկուն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանատան զի-
նուորական կցորդ, գնդապետ Բէրժէ, որը ան-
ցեալ տարի Միջագետքի կողմը գիտնական հետա-
զոտութիւններ է կատարել, այս տարի Փոքր-Ա-
սիայի կողմը նոյն տեսակ հետազոտութիւնների
ձեռնարկելով, Պարսկաստան էլ պիտի երկայն
և ուսումնասիրութիւններ պիտի անէ երկրի հին և
նոր քաղաքակրթական վիճակի մասին:

—Լճիկոնից հեռագրում են, որ պարսկական
անդամներից 41 հոգի ինֆլուէնցայով հիւանդ
են: Հիւանդութիւնը ամենից շատ Եօրէլի մէջ
է տարածված: Ինֆլուէնցան հետզհետեւ տարած-
վում է և Անգլիայի գաւառներում: Գաղստոն էլ
նոյն վարակիչ ցավով է հիւանդ, միայն նրա վե-
ճակը շատ ծանր չէ երևում:

—Բէլգրադից գրում են, որ սերբական մի-
նիստրութեան մի քանի անդամներ երկար ժո-
ւանակ աշխատում էին համոզել Նատալիա թա-
գուհուն, որ նա իր կամքով դուրս գնայ երկրից,
խոստանալով այդ դէպքում նրան պատուով ճա-
նապարհ ցցել և աւելի հնչուտանել իր որդու հետ
տեսնելու, բայց թագուհին մերժելով այդ յայտ-
նեց, որ իր կամքով երկրից դուրս չի գալ: Այն
ժամանակ ստիպվեցան նրան դուրս ուղարկել
կառավարական հրամանով:

—Մակեդոնիայում, ինչպէս գրում են, ընդհա-
րուներ տեղի ունեցան թուրքերի և մի խումբ
բոլղարներ մէջ: Թուրքաց կառավարութիւնը
այդ բանում միջադուր ճանաչելով բոլղարներին,
զինել է բոլղարական կառավարութեան խնդրե-

լով մի փոքր անհաճարել իր հայտաւորներին:
—Լուր վայ, որ Նատալիա թագուհին մտադրի
է հատատել իր բնակութիւնը Պարսկաստան:

—Կորֆու կղզուց շատ հեղաներ հեռացան,
որպէս զի բնակութիւնը հաստատեն մի աւելի ա-
պահով տեղում:

—Աթէնքից հեռագրում են, որ յունաց թագա-
ւորը և մինիստր Դէլիանիս ուղևորվեցան Կորֆու
կղզին, որտեղ հեղաների դէմ շարժում է առաջ
կել:

—Լճիկոնի քաղաքային վարչութիւնը նշանա-
կեց 3500 ֆունտ ստերլինգ գումարը գերմանա-
կան կայսրին ընդունելու համար:

—Աւստրիայի վրա անսխալ տղաւորութիւն
է գործել սերբացի և ռուսացի ուսանողները
այն ժողովը, որը այս օրերս գումարվել է Տուրն-
Սեյերինում: Այդ ժողովում ուսանողները յայտա-
րարեցին միութիւն և եղբայրութիւն բնականա-
բար ազգերի մէջ, նմանապէս բարեկամութիւն
Աւստրո-Ունգարիայի սլաւական ազգերի հետ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 մայիս: Այսօր Նոյս կայսե-
րական Մեծութիւնների թագադրութեան օրը,
խառնական տաճարում պատարագ մատուցվեց՝

պալատական, քաղաքացիական և զինուորական
պաշտօնականների ներկայութեամբ — Հրատարակ-
ված են Բարձրագոյն հաստատված կանոնները
գրադիտութեան դպրոցների մասին, որոնք պէտք
է բացվին բոլոր թիմուրում, բացի Ռիդայից և
Ֆինլանդիայից: Այդ կանոններով իրաւունք է
տրվում ուղղափառ հոգևորականութեան բանալ
այդ տեսակ դպրոցների, ծախական քահանաների
անմիջական հսկողութեան ներքոյ, ամեն տեղ
ուսուցանելու համար նոր սերունդի կրօնի ճշմար-
տութիւնը և քրիստոնէական բարոյականութիւն
ուղղափառ եկեղեցու հովանու ներքոյ դասին
և հայրենիքին ամբողջապէս ուղով նուիրված
լինելու: —Հրատարակված է Բարձրագոյն հաս-
տատված մայիսի 15-ի պետական խորհրդի կար-
ծիքը պետական բոլոր օպօլէնիա անուանված
գործերը վերակազմելու մասին:

ՈՒԳԼԻԶ, 15 մայիս: Այստեղի քաղաքային
դռնան արտակարգ նիստում վճռեց. —Յարեմիչ
Դմիտրի մարտիրոսական մահակ 300-ամեակի
միջառակին Ուգլիչի պալատում կանգնեցնել ս-
պատկերներ, ի պատիւ Բ. Ալեքսանդր Նիկիտայի
Նիկիտայ հրաշագործի և Դմիտրի Յարեմիչի մըշ-
տալու լրագրութիւն, այլ և կազմել 1,000 բուր-
լու դրամագլուխ նվիրագրված հուշարկների մու-
գէլը պահելու Յարեմիչի պալատում: Հանդիսին
կել էր մեծ բազմութիւն. ներկայ էին արքեպիս-
կոպոսը, նահանգապետը, հարան տեղերի աղն-
ականութեան պարագլուխները: Ժողովրդին
ձրի կերպով տալիս էին բոլորներն, որոնք վե-
րաբերում էին յատկապէս այդ հանդիսին և նուիր-
ված էին արքայադն նահատակին:

ԱԹԵՆԻ, 15 մայիս: Մեծ իշխան Գեորգի Ա-
լեքսանդրովիչ այսօր երեկոյան ուղևորվում է
Ղրիմ:

ՄՈՍԿՈՎ, 15 մայիս: Բոսնիայի կառավարու-
թիւնը ջնջելով բոլղարական կառավարութեան
պահանջը՝ իրանց յանձնելու Բլեյիվ օպանու-
թեան մէջ սեղադրող Ռիդովին և Նոթալուսովին,
վճռեց յիշեալ անձանց Բոսնիայի տահաններից
զուրս ուղարկել: Ռիդով արդէն ուղարկված է դէ-
պի ուսուց սահմանը:

ՄՈՍԿՈՎ, 16 մայիս: Արքունիք գալը տեղի
պիտի ունենայ մայիսի 18-ին: Նոյս կայսերա-
կան Մեծութիւններին փառաւոր կերպով դիմաւո-
րելու համար շինված է յաղթական կամար, զար-
դարված կանաչի պտկներով, Նոյս Մեծութիւննե-
րի վնդկներով և «Паръё-Батюшкѣ» и «Парицѣ
Матюшкѣ» ծաղկայ բառերով: Բացի դրօշակնե-
րից, պաշտպանները, զոններ և տները ձախմարտի
զարդարված են ծաղկներով, զորքերով, ծառերով,
շատ պատուհաններով զրկված են Նոյս Մեծու-
թիւնների կիսարձանները, փառաւոր հրաւարու-
թիւն է պատրաստված:

ՎԼԱԴԻՄԻՐ ՍՈՍՈՎ, 16 մայիս: Երեկոյան լինելի
զօրահանդէսը, ներկայութեամբ թաղաքապետ Զե-
սարեմիչի, չը կայացաւ վատ եղանակի պատճա-
ռով: Այսօր առաւօտեան, Նորին Բարձրութիւնը
բարեհաճեց տեսնել ամրութիւնները, այդտե-
ղից Սլեբլի նաւատորմը, որ ղեկավարեցին
փոխ-ծովապետ Երմոլանով և կապիտան Վինկա-

Կով. Նորին Բարձրութեանը ուղեկցում էին զե-
ներալ-նահանգապետը և զվերադատականը, բարձր
պաշտօնեաները: Դառն հանդիսաւոր ճաշ
պիտի լինի զհետադարձական նահանգապետի մօտ:

ՊԱՐԻՉ, 16 մայիս: Պատգամաւորների ժողովը
ընդունեց մի օրէնք, որի համաձայն ըզրոյ ֆրան-
սիական ամբիոցները՝ պաշարման ղէպըւում,
պէտք է ունենան ալիւրի պաշար՝ քաղաքա-
ցիների համար: Բիւ-ժանէյրօյից հաղորդում են,
որ այդտեղ արտասովոր մահացութիւն է պա-
տանում զեղին տենդից: Օրական մինչև 20
մարդ է մեռնում: Երբ ընկնում տաճ. ՍՈՇ ԵՐ

ԲՈՒՄԱՐԵՍ, 16 մայիս: Կառավարութիւնը
պահանջում է մինչև 45 միլիոն ֆրանկի կրեդիտ
բաժնի: Բոմբիւրայի նոր ամբիոցները աւար-
տելու համար արդէ այս պահի մօտ

ՕՐԵՍՏ, 16 մայիս: Այսօր տեղի ունեցաւ
այն արձանի բացումը, որը կառուցված է Շիպ-
կայի հերոս: զինեւրադիւտանտ Բարեկցիււ զե-
րեզմանի վրա՝ Օրէնայի հին գերեզմանատանը:
Ներկայ էին զինաւորական և քաղաքացիական
բարձր պաշտօնեաները, Օրէսայում եղած զօրա-
բաժինները, այս առիթով եկած զինաւորական
պատգամաւորները, քաղաքի ներկայացու-
ցիները և բազմաթիւ ժողովուրդ: Արձանը կա-

ռուցված է հանդուցեալ հերոսի այրի կնոջ փո-
ղով:

ՏԵՂԵԿԱՅՈՅՑ

ԱՆԴԻԿՈՎԱՍՏԵԱՆ ԵՐԿԱՌՈՒՂԻ

Փոստային դնացքը ուղեւորում է

ԹԻՖԼԻՍԻՑ ղէպի Բաթում . . . 8 ժ. 40 ր. առաւ.
ԲԱՌՈՒՄԻՑ ղէպի Ե Թիֆլիս . . . 11 > 8 > երեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ ղէպի Բաթում . . . 12 > 8 > երեկ.
ԲԱՌՈՒՄԻՑ ղէպի Ե Թիֆլիս . . . 7 > 40 > առաւ.
Ապրանքա-ճանապարհորդական դնացքը
ԹԻՖԼԻՍԻՑ ղէպի Բաթում . . . 3 ժ. 10 ր. ցերեկ.
ԲԱՌՈՒՄԻՑ ղէպի Ե Թիֆլիս . . . 8 > > > առաւ.
ԹԻՖԼԻՍԻՑ ղէպի Գանձակ . . . 9 > 45 > առաւ.
ԳԱՆՁԱԿԻՑ ղէպի Ե Թիֆլիս . . . 8 > 20 > երեկ.

ՌՈՒՄԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈՒԵՆԱԵՐ

ՀինԳՇԱՌՔԻՐ օրերը, երեկոյան 4 ժամին, ուղ-
ղակի բէյաթի, Նոթօրօյիցի վրայով:
ՇԱՐԱՌ օրերը, 8 ժամին երեկոյան, չրճական
բէյաթի, բոլոր նաւահանգիստների վրայով:
ԵՐԿԱՌՈՒՄ օրերը, 7 ժամին երեկոյան, ար-
տասանանան բէյաթի ղէպի Կ. Պօլիս:

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Նախօրին Սովետիկ Միջայէլ Թովմասեան Մէլք-Հայկազեան խնդրում է ազ-
գականներին և ծառայողներին շնորհ բերել իր եղբոր, արտիլերիայի գնդապետ ԱԼԷԿ-
ՍԱՆԴՐ ԹՈՎԱՍՏԵԱՆ ՄԵԼԻԿ-ՀԱՅԱՍՏԵԱՆԻ մահի մասին տարեգրութի հոգեհանգստին,
որը կատարվում է Զորաշէնի Սուրբ Աւետեաց եկեղեցում, Միջի-Փողոցում, վաղը,
կիրակի, մայիսի 19-ին, առաւօտեան 10½ ժամին: 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ

Շաբաթ, մայիսի 18-ին

Հայ դերասնական խումբը կը սալ

Բենեֆիս

Պ. ՊԵՏՐՈՍԵԱՆՑԻ

ՈՃՐԱԳՈՐԾԻ ԸՆՏԱՆԻՔ

Սկիզբն է 8 ժամին:

Տեղերի զինը պակասեցրած է:

2—2

Դիմելով այն անձանց, որոնց մօտ դնւում են հանդուցեալ Արարատեանի
ՍՈՒՏ ԶԳՆԱՌՔ՝ զրբի բաժանորդները, խնդրում եմ աշխատան շուտով վերա-
դարձնել ինձ, որովհետեւ զրբի ապագրութիւնը շուտով պէտք է սկսվի: Պէտք է ու-
ղարկել այս հասցեով: Тифлисть, Ооменая улица, № 15, Г-жѣ Шупаникѣ Апаратянѣ.
2—3

ՀԱՃՈՒԵԿՁԻԹ

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի

91-ն Մայիսի 1891

Պ Ա Հ Ա Ն Զ Ք	Թիֆլիսում	Բազուի և Բա- թումի բաժն.	Ընդամենը	Պ Ա Ր Տ Ք	Թիֆլիսում	Բազուի և Բա- թումի բաժն.	Ընդամենը
1. Կրամարիզ (առձեռն թղթադրամ).....	258,023—23	145,949—70	403,972—93	1. Հիմնական դրամադրութիւն.....	1,000,000 —	—	1,000,000 —
2. Գնթացիկ հաշիւ Պետական Բանկի. բաժնում..	665,000 —	261,000 —	926,000 —	2. Պահեստի դրամադրութիւն.....	191,665—21	—	191,665—21
3. Զեղջուռն (Disconto) մուրհակաց երկու տոո- րադրութիւնում.....	2,353,034—66	984,883—63	3,337,918—29	3. Կրամարիզ աւանդներ՝	—	—	—
4. Զեղջ. մուրհ. մի տոորապր. ապահ. ապրանք.	—	1,000 —	1,000 —	ա) Պայմանաժամով	2,539,727 —	375,018 —	2,914,745 —
5. Զեղջումն տոկոսաբեր թղթ., կտրօն. և այլն.	41,776—88	2,421—27	44,198—15	բ) ԳՊահանջ.....	331,797 —	57,130 —	388,927 —
6. Փոխաւորութիւն դրամականով	—	—	—	գ) Ընթացիկ հաշուով հասարակ.....	1,187,511—03	1,068,818—84	2,256,329—87
ա) Պետութիւնից ապահ. տոկոսաբ. թղթերի.	1,204,608—55	401,107 —	1,605,715—55	դ) > > > պայմանաւոր.....	—	149,852—85	149,852—85
բ) > > > ոչ ապահ. > > >	390,174 —	8,425 —	398,599 —	4. Փոխաւորութիւն պետ. բանկայի թիֆլ. բաժնի. ապահովված զեղջեալ մուրհակներով. . .	—	—	—
գ) ապրանքների	—	42,158 —	42,158 —	5. Մասնաւոր ընթացիկ հաշիւ պետ. բանկի թիֆլ. բաժնի. ապահով. տոկոս. թղթերով	—	—	—
դ) Ոսկւոյ և արծաթի.	—	2,358—96	2,358—96	6. Թղթակիցներ՝	—	—	—
7. Բանկի պատկանեալ տոկոսաբեր թղթեր.	466,334—13	63,878—98	530,213—11	ա) Նոցա հաշիւը (Loro).....	3,736,173—91	—	3,736,173—91
8. Ոսկի. և արտասահմանի փոխանակագրեր..	47,289—39	10,483—01	57,772—40	բ) Բանկի հաշիւը (Nostro).....	3,024,458—11	—	3,024,458—11
9. Թղթակիցներ՝	—	—	—	7. Բաժնիների հաշիւը կենտ. վարչութիւն հետ. կենտրոն. վարչութիւն հաշիւը բաժնիների	—	299,481—53	299,481—53
ա) Նոցա հաշիւը (Loro).....	3,686,710—52	—	3,686,710—52	8. Բանկի բաժնետոմսերու անվճար կտրօն- ների բաշիւը 1882, 1883, 1884, 1885, 1886, 1887, 1888 և 1889 թւերին.....	107,335—24	—	107,335—24
բ) Բանկի հաշիւը (Nostro).....	2,993,956—33	—	2,993,956—33	9. Չը վճարուած տոկոսների, աւանդների, ընթացիկ հաշիւների և այլ գործողու- թեանց.....	20,080—60	—	20,080—60
10. Բաժնիների հաշիւը կենտ. վարչութիւն հետ. կենտրոն. վարչութիւն հաշիւը բաժնիների	297,326—18	—	297,326—18	10. Ստացուած տոկոսների և յանձնարարա- կանների	74,757—56	19,377—43	94,134—99
—	—	77,548—67	77,548—67	11. Փոխանցիկ դոմարներ.....	117,306—87	51,311—82	168,618—69
11. Բողոքուած մուրհակներ.....	7,755—92	3,000 —	10,755—92	12. Արդիւնք 1890 թ:.....	139,095—68	11,619—28	150,714—96
12. Պայմանաժամը անդուցուած փոխաւորութիւն- ների.....	29,516 —	11,750 —	41,266 —				
13. Ընթացիկ ծախսեր.....	18,764—97	9,560—26	28,325—23				
14. Կահարարիւք և սկզբնական ծախսեր.....	2,761—94	3,302—50	6,064—44				
15. Ցետ տնտցուելիք ծախսեր.....	6,875—51	3,782—77	10,658—28				
Բ. Ա.	12,469,908—21	2,032,609—75	14,502,517—96	Բ. Ա.	12,469,908—21	2,032,609—75	14,502,517—96

ՎԻԵՆԱՅՈՒՄ

ՊՕՂ ՈՍ ԳԻԻՐԳԶԵԱՆ, կոմիսիոներ և թարգման ուսուց և հայոց լե-
զուի, առաջարկում է իր ծառայութիւնները պ.պ. ճանապարհորդներին և վաճառա-
կաններին և այլն:

ՀԱՍՅԻՆ. P. Kurkschianz, WIEN, Radetzky Strasse № 4.

Իսկ հեռագիրների համար. Kurkschianz Wien.

10—16 (Է. շ.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Շուրհաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՍԱՐԱՒԷԻՑ ղէպի ԲԱՌՈՒՄ, չորեք-
շաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունիսկից սկսած

ԵՒ ՓՈՒԱԴԱՐՁ

Բաթումից Մարսել, մանկով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պօլիս:

ԲԱՌՈՒՄԻՑ ՇՈՒԵՆԱԵՐԸ ԴՈՒՍ ԵՆ ԳԱԼԻՍ

Չորեքշաբթի, 22 մայիսի (3 յունիսի) շոգնաւ ՄԻՆԳՐԵԼԻԱ	→	ժԻԲՈՒԷՆ
→	5/17 յունիսի	ՍԻՐԿԱՍԻ
→	19 յունիսի (1 յուլիսի)	ԱՆԱՏՈԼԻԱ
→	3/15 յուլիսի	ՄԻՆԳՐԵԼԻԱ

և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կէսօրից յետոյ:
Ցամախները գնորդ ուղղակի երթևեկութեան Բաթումից ղէպի Պարիզ խիական գնից

պակսեցրած են:

Տեղեկութիւնները համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճն
դիմել ընկերութեան ագէնտներին. ԲԱՌՈՒՄԻՍ պ. Գալանիսին, Նաբեքէժույայ,
ԹԻՖԼԻՍԻՍ պ. Վիկտոր ԴԱՐՆՈՒՆ, Միջին-փողոցում, նախկին գնեւթայ Տէր-Ասատուրովի
տանը, ԲԱԳՈՒՄ, Սամսոն Դիլլարովին, Կօլուբիակինսկայա հրապարակ, և ՆՈՎՈՐՈՍԻՑ-
ՍԿՈՒՄ պ. Լուի Բընօին: 4—10 (Է. շ.)

Գլխաւոր պա-
հետը գտնու-
ւում է Թիֆլի-
սում և Բազ-
ում Բարձրա-
գոյն հաստատ-



վաճ ղեղատան
ապրանքների
վաճառման կով-
կասեան ընկե-
րութեան մօտ:
30—50 (շ.)

„ՎԻԵՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ“

(ВЕНСКИЙ МАГАЗИНЪ)

ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ

(ԳՈԼՈՎԻՍԿԻ ՊՐՈՍՊԵԿՏ, ԱՌԱՋԻՆ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ ՀԱՆՐԻՊ, ՄԻԿԱՆԻՍԻ ՏԱՆԸ)

Ստացել ենք ՄԵՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԵ մարդկանց և երեխաների դարձանային և ա-
մաւային պատրաստի հագուստներ, ամենավերջին ձևի:

ԳՆԵՐԸ Հափաւոր են և ամենքին մատչելի:

Խուզակըրեանց. 11—15